

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2019 թ. մարտի 22-ի նիստի

(արձանագրություն N9)

1. ՈԱԿ-ի կողմից վերջին ամսվա ընթացքում իրականացրած մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ Ա. Պետրոսյանի հաղորդումն ընդունելի գիտություն.

1.1 հանձնարարել Ա. Պետրոսյանին դասախոսական կազմի բացակայությունների վերաբերյալ տվյալները ներկայացնել ՈւԳԱԳ պրոռեկտոր Ն. Սարգսյանին՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ:

2. 2018-2019 ուս. տարվա ավարտական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

3. Վերանայել 2018-2019 ուս. տարվա ԱԱՀ-ների քննարկման ներկայացված համակազմերը՝ նկատի առնելով արված առաջարկները,

3.1 ԵԹԿՊԻ և ԵԹԿՊԻ մասնաճյուղերի 2018-2019 ուս. տարվա բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորումը կազմակերպելու և անցկացնելու նպատակով՝

3.1.1 սահմանել վճարման հետևյալ արժեքային նորմերը.

ա/ մեկ ուսանողի պաշտպանության համար հանձնաժողովի նախագահին՝ 1 ժամ, հանձնաժողովի անդամներին՝ 0,5 ժամ,

բ/ Դերասանական արվեստ, Ռեժիսուրա մասնագիտությամբ մեկ ավարտական աշխատանքի դիտման համար՝ 0,5 ժամ,

գ/ Պարարվեստի ռեժիսուրա մասնագիտությամբ մեկ ավարտական աշխատանքի դիտման համար՝ 20 ր.,

դ/ Թատերագիտություն, Գրական ստեղծագործություն մասնագիտությունների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընթերցանության համար՝ մեկ աշխատանքը 0,5 ժամ:

3.1.2 Մեկ ժամի արժեքը սահմանել 2000 ՀՀ դրամ:

3.1.3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների քարտուղար նշանակել ինստիտուտի գիտքարտուղար Գոհար Հովհաննիսյանին և աշխատանքների իրականացման համար սահմանել 180.000 ՀՀ դրամ:

4. Արձանագրել, որ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի վարիչի տեղակալման նպատակով անցկացված փակ, գաղտնի քվեարկությունը կազմակերպվել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1. հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

4.2. փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ԵԹԿՊԻ-ի ամբիոնի կանոնադրության 7-րդ կետի համաձայն պրոֆեսոր Արմեն Վասիլի Մելիքսեթյանը

ձայների մեծամասնությամբ (25 կողմ, 3 դեմ, 1 ձեռնպահ) ընտրվել է Բեմական շարժման և մեներգի ամբիոնի վարիչի պաշտոնում,

4.3. առաջարկել ռեկտորին ԵԹԿՊԻ-ի ամբիոնի կանոնադրության 8.1. կետի համաձայն պրոֆեսոր Արմեն Վասիլի Մելիքսեթյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

5. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու կապակցությամբ կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

5.1. հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

5.2. փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ) ենթակետի համաձայն Արամ Միսակի Սուքիասյանին ձայների մեծամասնությամբ (24 կողմ, 4 դեմ, 1 անվավեր) շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 «Թատերական արվեստ,կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈԿ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

6. ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղում առկա խնդիրների մասին Լ. Արզումանյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,

6.1. Մոսկվայում կայացած փառատոնին դերասանական 3-րդ կուրսի ուսանողների մասնակցության արդյունքների մասին միջազգային և հանրային կապերի գծով պրոռեկտոր Ա. Եղիազարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն,

6.2. հանձնարարել ՄՀԿ գծով պրոռեկտոր Ա. Եղիազարյանին Մոսկվայում կայացած փառատոնում մրցանակ շահած ուսանողների մասնակցությամբ նկարահանել տեսահոլովակ և տարածել համացանցում:

Գիտքարտուղար՝

Գ. Հովհաննիսյան